

մարմինէն, այն ատեն իրենց պիտի սկսէին ապրիլ ճշմարիտ յաւիտեանական կեանքը. անոնք չէին հաւատար մարդու յարութեան:

Տիեզերական փրկագործութեան խորհուրդով Աստուած խոստացաւ իր Որդւոյն միջոցաւ յարութիւն տալ մարդոց, որոնք Քրիստոսի նման յարութիւն պիտի առնեն մեռելներէն եւ զգենուն Անոր նոյն մարմինէն: Յովհաննէս առաքեալ իր ընդհանրական Առաջին Թուղթին մէջ կ'ըսէ. «Մենք պիտի ըլլանք անոր նման» (Գ. Ժ), եւ Պօղոսի համաձայն՝ «մեր ողորմելի մարմինը կերպարանակից պիտի ըլլայ իր փառաւոր մարմինը» (փիլիպ. Գ 21): Ան հոգեկան մարմինն ֆիզիքական մարմնէն ունեցած տարբերութիւնը քացատրելով՝ կ'ըսէ. «Այսպէս է նաեւ մեռելներուն յարութիւնը. կը սերմանուի

ապականութեամբ, եւ յարութիւն կ'առնէ առանց ապականութեան. կը սերմանուի անարգութեամբ եւ յարութիւն կ'առնէ փառքով. կը սերմանուի տկարութեամբ, եւ յարութիւն կ'առնէ զօրութեամբ: Կը սերմանուի շնչաւոր մարմին, եւ յարութիւն կ'առնէ հոգեւոր մարմին. եթէ կայ շնչաւոր մարմին, կայ նաեւ՝ հոգեւոր» (Ա. Կորնթ. ԺԵ. 42-44):

Նոր Կտակարանը մեզի կը սորվեցնէ, որ թէեւ բոլորս յարութիւն պիտի առնենք, բայց միայն արդարները պիտի ժառանգեն երկնից արքայութիւնը. որովհետեւ Յիսուս Քրիստոսի խոստումին համաձայն այլեւս մենք «հրեշտակներու հաւասար պիտի ըլլանք եւ Աստուծոյ որդիներ, քանի որ յարութեան որդիներ ենք» (Ղուկ. Ի. 36):

ԲԱՐԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

Ի՞նչ է «ԶԳՕՆ» ԳԻՐԲԸ

Հայ միջնադարեան մատենագրութեան մէջ մեծ ճանաչում ունեցող գրքերից է «Զգօն» անունը կրող գիրքը, որն ասորական այրութենի 22 տառերի թուին համապատասխան (հետագայում աւելացուել է եւս մէկը) ճառերի, խրատական յորդորների ու քարոզների ժողովածու է, որը նաեւ արժեքաւոր տեղեկութիւններ է պարունակում վաղ շրջանի արեւելեան քրիստոնէութեան, վանականութեան ու անապատականութեան ծագման եւ այլ հարցերի վերաբերեալ: Այն գրել է «Պարսիկ Իմաստուն» մականունով յայտնի Աֆրասիատ աշխարհական եւ ասորական Մար-Մաթայ վանքի Մար Յակոբ եկեղեցական անունով յայտնի եպիսկոպոսը 337-345թթ.: Գիրքը հայերէն է թարգմանուել 5րդ դարի առաջին կէսին: Հայ իրականութեան մէջ այն ճանաչման է արժանացել, քանի որ դեռեւս վաղ միջնադարում վերագրուել է Մծքինի Յակոբ եպիսկոպոսին եւ գրուած համարուել Ս. Գրիգոր Լուսաւորչի պատուէրով: Հայերէն օրինակներում այն հետեւեալ նախագիրն ունի. «Գիրք որ կոչի Զգօն արարեալ սրբոյն Յակովբայ երիցս երանեալ հայրապետին Մծքին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգոր Լուսաւորչին, սակս մանկանց նորոյս Սիովնի»: «Զգօն» խափմա քառի թարգմանութիւնն է, որ նշանակում է «իմաստուն»: